ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1960 Общественные науки

ԳՐԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ղ. Բ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ. ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԹԵՈՐԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԸ

Հայպետհրատ, 1958 թ.

Հայպետհրատը 1958 թվականին լույս է ընծայել դոցենտ Ղազար Վարդապետյանի «Արտացոլման մարքս-լենինյան թեորիայի հարցերը» գիրքը։

Գիրքն իր բովանդակությամբ և շարադրանքի ձևով կարող է հավակնել օրիգինալության։ Նա հենց այդպիսին է։

Բաժինները դասավորված են հետևյալ կարգով.

1) Արտացոլման մարդկային կարողության առաջացումը. 2) իմացության դիալեկտիկական պրոցեսը (զգայություն, ընկալում և մտապատկեր), 3) իմացության դիալեկտիկական պրոցեսը (հասկացություններ). 4) նյութական աշխարհի զարգացման օրինաչափությունները. 5) բացարձակ և հարաբերական ճշմարտություն. 6) պրակտիկան որպես ճշմարտության չափանիշ։

Առաջին բաժինը սկսվում է այն ճիշտ պնդումով, որ հետաքրքրությունը դեպի շրջապատի աշխարհը հոգու ինչ-որ ներքին պահանջ չի եղել, այլ թելադրվել է հասարակական մարդու նյութական կյանքի անհետաձգելի պրակտիկ պահանջներով։

Հետագա շարադրանքը ենթարկված է այդ ընդհանուր դրույթի բովանդակության բացահայտմանը։ Ընդ սմին հեղինակը վերլուծում է մատերիայի և գիտակցության հարաբերության պրոբլեմը, աշխատելով քննադատաբար ցույց տալ դրա պատմությունը։ Այստեղ նա առանձնացնում է Ֆիգրոյի կռահումը, որ ժամանակին բարձր է գնահատել և գիտության նոր տվյալների հիմքի վրա բացահայտել ու զարգացրել է Վ. Ի. Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ։ Լենինի միտքն այն է, որ ամբողջ մատերիային հատուկ է զգայության նման հատկություն, արտացոլման հատկություն, որ «պարզ արտահայտված ձևի մեջ զգայությունը կապված է միայն մատերիայի բարձր ձևերի հետ (օրգանական մատերիան)»։ Ղ. Վարդապետյանն աշխատում է ցույց տալ անկեղեն նյութից կենդանի-նյութի առաջացման պրոբլեմի լենինյան գիտական լուծման էությունը։ Այնուհետև հեղինակը քննության է առնում կյանքի առաջացումն ու զարգացումը, դիմում է սովետական գիտության տվյալներին, մասնավորապես Ա. Ի. Օպարինի աշխատություններին։ Գրքում շարադրվում է մարքսիստական այն դրույթը, որ մարդը երևան է եկել աշխատանքի շնորհիվ, և հենց այդ պրոցեսում էլ ձևավորվել են նրա բոլոր հոգեկան ընդունակությունները։ Եթե կենդանին, ասված է գրքում, արտադրում է միակողմանիորեն (իր և իր ձագերի համար ամենաանհրաժեշտը), ապա մարդը արտադրում է ունիվերսալ կերպով։ Եվ նյութական արտադրության այդ ակտիվությունը մարդու հոգեկան ակտիվության հիմք է ծառայում (տես էջ 30)։ Այդ ակտիվությունը, ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, նյութական արտադրության վրա իր ունեցած հակադարձ ներգործությամբ բարձրացնում է մարդու ճանա-

չողական ուժը։ Այդ կապակցությամբ նա քննադատում է բնախույզ Կուպենին, զոոհոգեբան Քյոլլերին այն բանի համար, որ առաջինը տերմիտներին բարձր է դասում մարդուց, իսկ երկրորդը տարբերություն չի տեսնում մարդու և կապկի միջև։ Ընդսմին հեղինակը դիմում է պավլովյան ֆիզիոլոգիայի տվյալներին, ընդգծելով կենդանու և մարդու և՛ նմանությունը (առաջին ազդանշանային սիստեմ), և՛ տարբերությունը (երկրորդ ազդանշանային սիստեմ)։ Մարդու արմատական առանձնահատկությունը բնորոշվում է նրանով, որ նա արտադրության գործիք արտադրող հասարակական կենդանի է։

Երկրորդ բաժնում խոսվում է զգայական ճանաչողության մասին։ Այն սկսվում է զգայություններից՝ մարդու կողմից օբյեկտիվ աշխարհի ճանաչման միակ աղբյուրից։ Այդ հարցը բացատրելով, հեղինակը հենվում է զգայական օրգանների մեխանիզմի բնագավառում Ի. Պ. Պավլովի դպրոցի նվաճումների վրա։ Արդյոք կարող էին ավելի մեծ թվով զգայական օրգաններ լինել։ Այդ հարցը դնելով, հեղինակը քննադատում է սկեպտիցիզմը, ագնոստիցիզմը։ Նա քննադատում է և՛ ռացիոնալիզմը, որը ինտելեկտը համարում էր զգայական օրգաններից իբր թե անկախ գոյություն ունեցող մի վեցերորդ զգայարան, և՛ էմպիրիզմը, որը սահմանափակվում է լոկ արտացոլման օբյեկտիվությունը ընդունելով, բայց չի տեսնում այդ արտացոլման հասարակական-պատմական բնույթը։

Պրոբլեմի պատմության որոշ քննադատական ակնարկից հետո հեղինակը բերում է զգայության՝ որպես օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերի լենինյան կլասիկ սահմանումը և էլեմենտների մախիստական թեորիայի նրա քննադատությունը։ Խոսվում է նաև նյութականի և հոգեկանի հակադրության հարաբերականության մասին, քանի որ դրա բացարձակությունը պահպանվում է միայն փիլիսոփայության հիմնական հարցի շրջանակներում։ Վերջին հարցը կապվում է Դիցգենի կողմից իդեալիզմի անզգույշ քննադատության հետ, որտեղ նա հոգին չի տարբերում սեղանից, շեղվելով դեպի վուլգար մատերիալիզմ։ Հեղինակը ճիշտ է մեկնաբանում Լենինի այն միտքը, որ և՛ մատերիայի, և՛ իդեայի ռեալ գոյության ընդունումը իրավունք չի տալիս իդեան համարել նյութական, այլապես կիսախտվի արտացոլման թեորիայի ամեն մի գիտական հիմք (տես էջ 54)։ Հեղինակն ընդգծում է Էնգելսի մտքերն այն մասին, որ զգայությունն ունի իր պատմությունը։ Պարզվեց, որ այդ պատմությունը չեն հասկացել հին մատերիալիստները։ Մարքսը նկատի ունենալով զգայության կազմվելու պատմությունը, ցույց է տալիս, որ զգայությունները մարդկային են դարձել և՛ սուբյեկտիվորեն, և՛ օբյեկտիվորեն, որովհետև մարդն իրերն ընկալում է ակտիվորեն, գործնականում։ Հենց այստեղ էլ հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես Մարքսը բացահայտել և ցույց է տվել Ֆոյերբախի հայեցողականությունը։ Ճիշտ է ասում հեղինակը, որ մտածողությանը նախորդում և ուղեկցում է զգայությունը։ Դեռևս Դերցենն էր մատնանշում, որ որքան միտքը ավելի հեռանա կյանքից, այնքան ավելի անհարկավոր կդառնա։

Հեղինակը վերլուծում է նաև այն հարցը, որ զգայությունը արտաքին աշխարհի հետ գիտակցության անմիջական կապն է, որ գիտակցության կենտրոնը ուղեղն է, որն իր հերթին հանդիսանում է մատերիայի կազմակերպման բարձրագույն ձևը։

Ընկալմանը գրքում բիչ էջեր են նվիրված (էջ 65—67)։ Այստեղ մատնանշվում է զգայության և ընկալման կապը։ Մեր հեղինակը, ինչպես և ուրիշ

շատերը, գտնում է, որ ընկալումը զգայությունների ընդհանրացումն է, առարկայի, երևույթի ամբողջական պատկերը։ Մեզ թվում է, որ զգայության և ընկալման փոխհարաբերության հարցում հստակ և ճիշտ պատկերացում չկա դրախոսվող գրքում։

Անցնելով պատկերացման հարցին, մենք չենք կարող համաձայնել հեղինակի այն կարծիքին, թե պատկերացումը հանդիսանում է միջին օղակը զգայականի և տրամաբանականի միջև (տես էջ 67)։ Պատկերացումը միջին օղակ չէ, այլ զգայական ճանաչողության բարձր աստիճանը, որը նախապատրաստում է անցումը դեպի տրամաբանականը։ Զգայականի և տրամաբանականի միասնությունը իմացության պրոցեսում հնարավոր է միայն հասարակական պրակտիկայի հիմքի վրա, պրակտիկա, որն էլ հենց ճանաչողության պրոցեսում որոշում է այն, թե ինչ է հարկավոր մարդուն (Լենին)։ Իրավացի է հեղինակը, երբ ասում է, թե մտքի ակտիվությունը որոշվում է պրակտիկայի հետ նրա ունեցած կապով։ Նա քննադատում է մտքի ակտիվության իդեալիստական մեկնաբանությունը, ինչպես և քննադատության է ենթարկում պրագմատիզմը, ցույց տալով նրա ռեակցիոն բնույթը։

Երրորդ բաժինը սկսվում է Մարքսի ցուցումով դիալեկտիկական կոնկրետի մասին։ Ըստ Մարքսի՝ կոնկրետը հանդիսանում է բազմապիսության միասնություն, ճանաչված կոնկրետ, և ոչ ելակետային, թեև այդ միասնությունը հենց ելակետային է, ճիշտ է, միայն որպես զգայական-կոնկրետ։ Ցույց է տրված Մարքսի կողմից Հեգելի քննադատությունը այն բանի համար, որ նա, Հեգելը իրականը համարում էր մտածողության արդյունք։ Այնուհետև հեղինակը զգայականը կապում է տեսական մտածողության հետ, ցույց տալով, որ մտածողության հիմնական ձևերից մեկը հանդիսանում է հասկացությունը, որի կազմավորումը իրերի, երևույթների նորանոր կապերի բացահայտումն է (տես էջ 83)։ Մեծ ուշադրություն է նվիրված հասկացությունների դերին օբյեկտիվ աշխարհի ճանաչման գործում։ Ամենահասարակ ընդհանրացումը, հասկացությունների առաջին գոյացումը նշանակում է աշխարհի ավելի խորը իմացում, իսկ ընդհանուր հասկացությունների անվերջ դումարը տալիս է կոնկրետությունն իր լրիվության մեջ։ Լենինի այս մտքերը պատշաճ տեղ են գտել ընդհանուր հասկացությունների նշանակության այն մեկնաբանման մեջ, որ տալիս է հեղինակը։ Այստեղ նա քննադատում է սեմանտիկներին, որոնք ելնում են ընդհանուր հասկացությունների նկատմամբ նոմինալիստական ըմբռնումից և գործը պատկերում են այնպես, թե իբր ընդհանուր հասկացությունները վնասակար են, դրանք չարիքների աղբյուր են, ուստի՝ եթե «շահագործում», «կապիտալ», «մոնոպոլիաներ» և այլ հասկացություններ վերացվեն, կհաստատվի մարդկանց փոխըմբռնում և սոցիալական ներդաշնակություն։ Սեմանտիկները ժխտում են օբյեկտիվ օրինաչափությունը, օբյեկտիվ ճշմարտությունը, ժխտում են ընդհանուր հասկացությունների դերն ու նշանակությունը իմացության մեջ։ Ճիշտ է վարվում հեղինակը, քննադատելով Ջ. Դյուրիին՝ հասկացությունների նշանակության նրա ժխտման համար։

Հետևելով Լենինի ուղենիշ մտքերին, Ղ. Վարդապետյանն աշխատում է բացահայտել իմացության պրոցեսի դիալեկտիկական բնույթը։ Արտացոլման պրոցեսը հարաբերականորեն ճիշտ է արտացոլում իրականությունը ի հակադրություն «մերկ ռեալիստիզմի», որը ժխտում է օբյեկտիվ ճշմարտությունը։ Այս կապակցությամբ խոսվում է կատեգորիաների նշանակության մասին և այն

մասին, թե ինչպես են նրանք կազմավորվում։ Հեղինակի եզրակացության մեջ ասվում է՝ հասկացությունները, կատեգորիաները իրերի պատկերներն են, բնության արտացոլման ձևերը, իմացության միջոցները. նրանք ունեն իրենց պատմությունը, որի ընթացքում էլ հարստացել են. նրանց պատմությունն արտացոլվող օբյեկտի և մարդու պրակտիկայի պատմությունն է։ Ըստ հեղինակի դրանով էլ բացատրվում է հասկացությունների ճկունությունը։ Այստեղ հարկ էր ավելացնել, որ կատեգորիաներն ու հասկացությունները փոխակերպվում, կոնկրետանում են հասարակական պրակտիկայի զարգացման հիմքի վրա, իմացության զարգացման պատմության ընթացքում։

Չորրորդ բաժինը հարուստ նյութ է տալիս նյութական աշխարհի զարգացման օրինաչափությունների և դրանց ճանաչելիության մասին։ Աշխարհի և նրա օրինաչափությունների ճանաչելիության սկզբունքի դիալեկտիկա-մատերիալիստական մեկնաբանման խորը գիտական նշանակությունն ընդգծելու նպատակով, հեղինակը նախամարքսյան մատերիալիստներից (Սպինոզա, Դիդրո, Ֆոյերբախ և ուրիշ.) բերում է համապատասխան տվյալներ, որոնք ցուցադրում են մատնանշված սկզբունքի զարգացման պատմությունը, պատմական հաջորդականությունը, քննադատում է օբյեկտիվ իրականության օրինաչափությունների իդեալիստական, ագնոստիկական ժխտումը կամ դրանց հանգեցումը աստվածաբանությանը։ Միջուկային ֆիզիկայի բնագավառից բերված փաստերից հեղինակը եզրակացություն է անում բնության ճանաչման օբյեկտիվության և անվերջության մասին։ Հեղինակն այս բաժնում բավականաչափ ուշադրություն է նվիրում ժամանակակից ռևիզիոնիզմի քննադատությանը։ Այս կապակցությամբ նա մերկացնում է իրենց զարգացման տվյալ էտապում գտնվող տարբեր երկրների պայմանների սպեցիֆիկության բացարձակացման հակամարքսիստական, հակալենինյան բնույթը, միաժամանակ պաշտպանելով այն բնդհանուրը, որի պահպանումը պարտադիր է յուրաքանչյուր երկրի համար, հաշվի առնելով նրա սպեցիֆիկ պայմանները։ Բաժինն ավարտվում է նրանով, որ հեղինակը խոսում է հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունների մարքս-լենինյան ըմբռնման նշանակության մասին՝ կյանքը վերափոխելու համար։

Հինգերորդ բաժնում հեղինակը շարադրում է մարքս-լենինյան ուսմունքը ճշմարտության մասին։ Այստեղ ճիշտ է լուսաբանվում օբյեկտիվ ճշմարտության նշանակությունը դիալեկտիկական մատերիալիզմի արտացոլման տեսության մեջ, ինչպես և բացարձակ ու հարաբերական ճշմարտության հարաբերակցության հարցը։ «Եթե ընդունվում է ճշմարտության օբյեկտիվությունը, առարկայական բնույթը,— ասում է հեղինակը,— հետևողական լինելու դեպքում չի կարելի չընդունել բացարձակ ճշմարտությունը» (էջ 154)։ Այս առնչությամբ նա փիլիսոփաներին բաժանում է երկու մասի։ Մի մասը նրանք են, ովքեր գտնում են, որ բացարձակ ճշմարտությունը հասանելի է միանգամից։ Մյուս մասը «մերկ» ռելյատիվիստներն են։ Քննադատում է թե՛ առաջիններին, թե՛ երկրորդներին։ Մասնավորապես նա քննադատում է մախիստ Բոգդանովին, որը ժխտում է օբյեկտիվ ճշմարտությունը։ Ցույց տալով օբյեկտիվ, բացարձակ և հարաբերական ճշմարտության հարաբերակցության լենինյան լուծումը, հեղինակը դիմում է հարցի պատմությանը, թվարկում է դանազան մեկնաբանություններ, սկսած Պլատոնից, Դեմոկրիտից, Սպինոզայից և վերջացրած Ա. Ռ. Տյուրգոյով։ Ընդ սմին նա ճիշտ եզրակացություն է անում. անցել են դարեր,

բայց մարդիկ ավարտուն ճշմարտություն որոնելով, միշտ մնացել են հարաբերական ճշմարտության մակարդակի վրա (տես էջ 161)։ Քննադատելով «մերկ» ռելյատիվիստներին, մախիստներին, ցույց է տալիս, որ ռելյատիվիստի տեսակետից կարելի է արդարացնել ամեն մի սոֆիզմ։ Այդ քննադատության մեջ հեղինակը բերում է Էնգելսի կլասիկ դրույթը մարդկային իմացության սուվերենության և ոչ սուվերենության մասին և Վ. Ի. Լենինի դրույթն այն մասին, որ հարաբերական ճշմարտության գումարներից կազմվում է բացարձակ ճշմարտությունը։ Ենթաբաժինը ավարտվում է Մարքսի այն պնդումով, թե և՛ հետազոտության հանրագումարը, և՛ դեպի հանրագումարը տանող ճանապարհը պետք է լինեն ճշմարիտ (տես էջ 178)։

Մյուս ենթաբաժինը նվիրված է այն հարցին, որ ճշմարտությունը պրոցես է։ Ինչպես որ կյանքը կանգ չի առնում մի կետում, այլ միշտ զարգանում է, այդպես էլ զարգանում է ճշմարտությունը։ Այդ իմաստով ճիշտ է հեղինակի պնդումը, որ յուրաքանչյուր իրի, երևույթի ինքնուրույնությունը անվերջ բազմազանության մեջ հարաբերական է։ Ի հաստատումն իր մտքերի, հեղինակը բերում է Էնգելսի խոսքերն այն մասին, որ բնության հավերժական օրենքները ավելի ու ավելի դառնում են պատմական օրենքներ։

Գրքում հիշատակված են նաև միջուկային ֆիզիկայի ժամանակակից մի շարք տվյալները, վկայակոչված են Վ. Ի. Լենինի մտքերն այն մասին, որ իմացությունը չունի սահմաններ, որ էլեկտրոնը անսպառելի է։ Հեղինակն առանձին ջերմությամբ է խոսում Սովետական Միության մեջ գիտական մտքի զարգացման մասին, որտեղ մարդկության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել և արձակվել են Երկրի արհեստական արբանյակներ։

Վեցերորդ բաժինը նվիրված է պրակտիկային, որպես ճշմարտության չափանիշ։ Հեղինակը քննադատության է ենթարկում իմացության մեջ պրակտիկայի նշանակության ըմբռնումը մինչմարքսյան փիլիսոփաների կողմից, քննադատում է մախիզմը, մասնավորապես ռուսական մախիստներին, օրինակ, Բոգդանովին՝ նրա «սոցիալապես կազմակերպված փորձի» կոնցեպցիան։ Այնուհետև ցույց է տալիս պրակտիկայի նշանակության ըմբռնումը XIX դարի ռուսական մատերիալիստների կողմից։ Այստեղ բերում է Դերցենի մտքերը փորձի և թեորիայի միասնության, ինչպես և Չերնիշևսկու մտքերը իմացության մեջ պրակտիկայի նշանակության մասին։ Այնուհետև ցույց է տրվում, որ միայն մարքս-լենինյան փիլիսոփայությունն է ճիշտ դրել և լուծել պրակտիկայի և իմացության հարաբերակցության հարցը։ Այդ կապակցությամբ նա քննադատում է Հեգելին, որը առաջադրում է պրակտիկայի սկզբունքը իմացության մեջ, բայց պրակտիկան արտադրությունից դուրս, պրակտիկան՝ որպես հոգևոր գործունեություն։ Քննադատվում է պրագմատիզմը որպես յուրատեսակ մախիզմ, որը շատ է խոսում պրակտիկայի մասին։ Բայց պրագմատիզմի համար պրակտիկան նեղ իմաստով օգտակար գործունեություն է գործամոլի, արդյունաբերողի, բորսային գործարարի համար։ Պրագմատիզմը ձգտում է ապացուցել նաև, որ ինքը զարգացնում է Ֆրանցիսկ Բեկոնի դաղափարները օգուտի և գործի մասին։ Սակայն, ինչպես հեղինակը ցույց է տալիս, օգուտի և գործի բեկոնյան և պրագմատիկական ըմբռնման միջև վիհ գոյություն ունի։ Եթե Բեկոնի համար օգուտն ու գործը ճշմարտության չափանիշ են, ապա պրագմատիստների համար դա պարզապես կապիտալիստի շահույթն է։ Տվյալ հատվածի ենթաբաժնում հեղինակը քննության է առնում վեցերորդ բաժ-

նի մեկնակետային հարցերից մեկը։ Մարքսիզմ-լենինիզմը թեորիայի զարգացումը հասկանում է միայն հասարակական պրակտիկայի հիմքի վրա. Լենինը մարքսյան թեորիան զարգացրեց ընդհանրացնելով մեր դարաշրջանի ռևոլյուցիոն պրակտիկան։ Իսկ ինքը՝ պրակտիկան տապալեց բուրժուական գիտնականների բոլոր այսպես կոչված պրոգնոզները մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրայի անկայունության մասին։ Այնուհետև խոսվում է թեորիայի ու պրակտիկայի միասնության մասին, այն մասին, որ թեորիայի ճշտությունը հաստատվում է պրակտիկայով։ Դրա հետ մեկտեղ նա ընդգծում է թեորիայի նշանակությունը պրակտիկայի կազմակերպման ընթացքի համար (հակադարձ ներգործություն)։ Հեղինակը բերում է Լենինի 1902 թվականին արտահայտած այն դրույթը, որ Ռուսաստանում երիտասարդ բանվորական շարժումը պետք է օգտագործի մյուս երկրների հարուստ փորձը։ Այդ կապակցությամբ նա դիպուկ քննադատության է ենթարկում ժամանակակից ռևիզիոնիզմը, որը ժխտում է պրոլետարիատի դիկտատուրայի հարուստ փորձը ՍՍՌՄ-ում, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման փորձն օգտագործելու անհրաժեշտությունը։ Այստեղ հեղինակն օգտագործել է ՍՄԿՊ 20-րդ համագումարի նյութերը, մասնավորապես այն նյութերը, որոնք վերաբերում են տեսական հարցերին։ Այս ,ամենում դժբախտաբար բացակայում է պրակտիկայի չափանիշի հարցի քննությունը։

Գրքում կան թերություններ, որոնցից մի քանիսը նշվեցին վերևում։ Այդ թերությունները, սակայն, չեն նվազեցնում գրքի արժեքն ու օգտակարությունը։ Այդ թերությունների շարքը կարելի է դասել նաև այնպիսի կրկնություններ, որոնք անհրաժեշտ չեն պրոբլեմի վերլուծության համար (տես էջ 83, 105, 107, 110, 118 և այլն). այնուհետև՝ ոչ լիովին ավարտված մտքեր լեզվի (տես էջ 41), հասկացությունների ճկունության (էջ 85—86), հասարակական կյանքի գիտական հասկացությունների (էջ 109) մասին, բացարձակ ճշմարտության ոչ բավարար սահմանում (էջ 182, 189) և այլն։ Կա նաև անունների անճշտություն. օրինակ՝ Ն. Գ. Պոմյալովսկու մի աշխատությունը կոչվում է «Очерки бурск», մինչդեռ գրքում գրված է «Бурсаки» (էջ 127)։

Ղ. Վարդապետյանի գիրքը թարմ շնչով է գրված, ունի օրիգինալություն. հեղինակը հանդես է բերում զգալի դիտելիքներ։ Ընդգծելի է գրքի նաև այն արժանիքը, որ քննարկվող հիմնական հարցերը հեղինակի կողմից ներկայացվում են ծագումնաբանական ասպեկտով. նա շարունակ մնում է պատմականության հողի վրա։ Հեղինակը հաճախ պատմական էքսկուրսներ է կատարում դեպի նախամարքսյան փիլիսոփայությունը՝ ցույց տալու համար, որ մարքսիստական փիլիսոփայության գաղափարները հանդիսանում են անցյալի առաջավոր գաղափարների զարգացման օրինաչափ և բարձրագույն աստիճանը։ Այդ լավ է. շարադրանքի այդպիսի ձևը աշխատությունը զերծ է պահում ձգձգումներից։ Դրա հետ մեկտեղ գրքի հեղինակը պետք է հաշվի առնի նաև շարադրանքի վերոհիշյալ ձևի ստվերոտ կողմը, որը, մեր կարծիքով, կարող է դրսևորել իրեն և որոշ չափով դրսևորել է նրանով, որ մարքս-լենինյան փիլիսոփայության հետազոտվող մի քանի հարցերը վերլուծվել են ոչ բավարար խորությամբ։

Ղ. Վարդապետյանի գիրքը օգտակար ու անհրաժեշտ է մեր ինտելիգենցիայի և բուհերի ունկնդիրների, մարքսիզմ-լենինիզմի բոլոր պրոպագանդիստների համար։

Գ. Վարդանյան